Լ. Դ. ՄԻՆԱՍՅԱՆ

(Նոր Ջուղա–Իրան)

ՀԱՅԵՐԵՆ ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳԻՐ ԳՐՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Ինչպես հայտնի է, հայերեն առաջին տպագիր գրքերը հրատարակվել են Վենետիկում Հակոբ Մեղապարտի կողմից XVI դարի սկիզբներում։ Հակոբը հրատարակել է հինգ գիրք և մի մաս մի գրքույկից ու միացրել հրատարակված իր գրքերից մեկին։ Այդ հինգ կամ վեց գրքերն են՝ 1. «Պարզատումար», 2. «Պատարագատետր», 3. «Ուրբաթագիրք», 4. «Աղթարք», 5. «Տաղարան» և 6. «Վասն զանի»։

Հնատիպ այս հինգ-վեց գրքերից մինչև այժմ հայտնաբերված են սակավաթիվ՝ 5—6 օրինակ միայն, որոնցից առաջին տպագրվածը ցարգ համարվել է «Պարզատումար»-ը, որի մեջ եղած տոմարական աղյուսակի առաջին տարեգրքի թվականը կրում է ՋԿԱ (1512) թիվը, որն և ընդունվել է որպես գրքի տպագրության տարեթիվ։

«Պարզատումար»-ի-ն հաջորդող երկրորդ տպագրված գիրքը համարվել է «Պատարագատետր»-ը, որի վերջին էջի վերջում ունեցած հիշատակարանում հիշված է 1513 (ՋԿԲ) թիվը։

Ստորև այդ հիշատակարանը նույնությամբ և ամբողջությամբ.

«Գրէցաւ ս[ուրբ]ր տառս ի. ջ. կբ. ի ա[ստուա]ծնապահ քաղաքս ի Վէնէժ որ է Վենետիկ ֆոանկստեան, ձեռամբ մէղապարտ Յակոբին, ով որ կարդայք մեղաց թողութի[ւն] խն[գ]րեցէք ա[ստուծո]յ»։

Հակոբի հրատարակած մյուս գրքերը թվական չունեն, ուստի և համարվել են ավելի ուշ ժամանակի հրատարակվածներ։

Հայաստանի Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի կողմից 1964 թ. հրատարակված «Բանբեր Մատենադարան»-ի թիվ 7 գրքի մեջ (էջ 275—295), Պ. Ռաֆայել Իշխանյանը մի ուսումնասիրական զեղեցիկ հոդված ունի, ուր մանրակրկիտ ձևով, Հակոբի գրքերում գործածված վերնագրային շրջնագարդերի մաշվածության վրայով քննության է առել այն խնդիրը, թե Հակոբի տպագրած անթվակիր գրքերից որ մեկն է ամենից առաջ տպագրվել և որ թվականին։

Հոդվածագիրը իր ուսումնասիրության մեջ միջանկյալ հարցում է արել Երուսաղեմի միաբանության հայրերին, որ իրենց ունեցած «Պատարագատետր»-ի վրա պարզեն եղած ենթադրությունը։

Երուսաղեմին արած հարցումը թողնելով իրենց պատասխանելու, ստորև հայտնենք, որ Նոր Ջուղայի Ս. Ամենափրկչյան Վանքի թանգարան-մատենադարանում ևս գտնվում է Հակոբի տպագրած գրքերից երկուսը՝ «Պատարագատետր»-ը և «Ուրբաթագիրք»-ը, որոնց մասին դժբախտաբար հիշված չեն ո՛չ Գ. Լևոնյանի «Հայ գիրքը և տպագրության արվեստը» գրքում և ո՛չ էլ մեզ ծանոթ մյուս մատենագիտական ցուցակներում։

Վերոհիշյալ գրքերի վրա, ըստ Պ. Ռաֆայել Իշխանյանի հարցումի, որոշ ուսումնասիրություն կատարելով, ներկայացնում ենք դրանց արդյունքը և մեր համեստ կարծիքը։

Նոր Ջուղայի թանգարան-մատենադարանի երկու գրքերը՝ «Պատարագատետր»-ն ու «Ուրբաթագիրք»-ը կազմված են միասին, անունների հիշած հերթականությամբ։ Առաջինն ունի 43 թերթ, 86 էջ, միջից պակասում է մեկ թերթ, լրիվը 44 թերթ է, երկրորդն ունի 24 թերթ, 48 էջ։ Իսկ դրա վերջին մասը՝ «Սուրբ Կպրիանոս»-ը 27 թերթ, 54 էջ։ Վերջին մասից պակասում է «Վասն զանի» հավելված գրքույկը, մամուլներում ունի գ. գ. և գբ. համարներ և վերնագրերի հետևյալ բաժանումները «Սուրբ Կպրիանոս», «Ուստիանէ կուսին», «Մաղթանք առսուրբսն», «Աղօթք Փոկասու» և «Այս է գիր օձահարիս»։

Այս երկու գրքերը թեև բաժանված են կավմից և ունեն սկզբում ու վերջում բաժանված թերթեր, բայց այնպես ամուր են կարված միմյանց, որ անգամ հնարավոր չեղավ ստուգել, թե միացյալ թերթեր ունեն, թե ոչ։

Դալով գործածված զարդագրերին ու շրջանակազարդերին, ասենք, որ զարդ միայն «Պատարագատետր»-ն ունի և դա էլ ոչ թե տպագրված էջերի վերևում, այլ բ էջի նկարի վերևին ու ներքևին, որոնց ձևը տարբեր է միանգամայն մյուս գրքերի զարդերից։

«Պատարագատետր»-ում գործ են ածվել միայն «Բաներեր»-ի հոդվածում հիշված թիվ 9—16, «Պարզատումար»-ի շրջանակազարդերը Ա. Գ. և Ե. պրակներում և «Ուրբաթագրքի» մեջ եղած թիվ 1—8 շրջանակազարդերը Բ. Դ. և Զ. պրակներում։

«Կպրիանոս»-ի մեջ, բացի երկու տեղ կրկնվող նկարներից, որ ցույց է տալիս հիվանդի վրա աղոթք կարդալու պահը, կան երկու այլ նկարներ ևս, որոնցից առաջինի նախորդ էջի վրա գրված է. «Յոհան», ըստ երևույթին, Յովհաննես ավետարանիչը, իսկ Բ էջում՝ մի մարդու նկար գիրքը ձեռքին։ Մյուս նկարը ներկայացնում է մի մարդու պատկեր՝ օձը բռնած ձեռքին և գտնվում է «Աւձահարք»-ի բաժնի սկզբում, առանց որևէ անվան հիշատակության։

Այժմ երկու խոսք Հակոբի տպագրած գրքերի հերթականության մասին։

Թեև մեզ համար դժվար է որևէ կարծիք հայտնել, որովհետև մյուս գրքերը չունենք մեր ձեռքի տակ, որի համար և անհրաժեշտ է շատ լուրջ ու բազմակողմանի քննություն, ինչպես որ փորձել է շրջանակազարդերի մաշվածության վրայով ցույց տալ հարգելի բանասեր պ. Ռաֆայել Իշխանյանը. Բայց մի բան, որ կուզեինք ասել, դա այն ենթադրությունն է, որ «Պարզատումար»-ը կարող է տպագրված լինել ավելի վաղ, քան մինչ հիմա հիշվել է, այսինքն՝ 1511 թ. և ոչ թե իր մեջ հիշված ՋԿԱ 1512 թ.։ Սովորաբար տպագրված տոնացույցների տարեգրերի աղյուսակի առաջին թիվը դրվում է գրքի տպագրության հաջորդ տարվանից, ինչպես 1868 թ. Երուսաղեմում տպագրված տոնացույցը և այլ նման տոնացույցներ ու տարեգրերի աղյուսակներ ունեցող ժամագրքեր։ Նույնը կարելի է ասել Կոստանդնուպոլսում Աստվածատուրի կողմից տպագրված անթվակիր տոնացույցի մասին, ուր տարեգրերի աղյուսակում հիշված է 1704 թ. և վստահաբար գրքը տպագրվել է 1703 թ.։

Այսու վերոհիշյալ հիման վրա պետք է հղրակայնել, որ «Պարզատումար»-ը տպագրվել է մեկ տարի ավելի շուտ, քան իր մեջ հիշված 1512 թ., իսկ «Պատարագատետր»-ը տպագրվել է 1513 թ., ինչպես որ ասում է իր հիշատակարանը։

Նոր Ջուղա
8 մարտ 1966